ԵՂԻՎԱՐԴ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ*

(Հատվածներ)

Եվ աշուն էր,
Ընկուլենին լուռ կը խոկար
Առվի ափին,
Աշնան հովի մատներուն տակ
Բարակ, բարակ:

Աղբյուր, վըտակ,
Իրենց սընդիկ մարմնին վըրայ,
Կապեր էին ապակիի գոտին պայծառ,
Ու լեռ տանող ամեն կածան,
Խորխ էր օձի,
Լեռնալանջին ինկած թավալ:

Մասիս հեռուն և Արագած,
Մոմեր ճերմակ,
Նոր օրերու պատարագին,
Հոգիներու կարմիր փառքին
Համար վառող,
Դաշտին վըրայ Արարատյան:

Եվ օրերուն այս աներպ,
Երբ ամեն բույս, ամեն ծաղիկ,
Հայ արցունքով և արյունով
Կը հասունանար,
Ճամբու փոշին աչվըներուն,
Սըրտին մեջ խոց,
Տուն կը դառնար Մեսրոպ Մաշտոց:

Հոն էր սիրտն իր,
Կապված հողին ու ջուրերուն,
Հոգին ոստայն՝
Մեր պապերու երակներուն
Եվ հունտերուն,
Նետված հողին հայրենական:
Հոն էր սիրտն իր,
Հին ըմպանակ ու նոր բուրվառ,
Ուրկե կաթիլ, ուրկե բուրում,
Թավալեին,
Ջինք ընելով այդ հողերուն,
Այդ ջուրերուն, ընդունարան անքակտելի:

* Երուսաղեմի հայոց բանաստեղծ պատրիարքը՝ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյան (Եղիվարդ), հայ գրերի հանճարեղ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանին իր հոգևոր տուրքն է տվել բանաստեղծության գողտրիկ մի հատորով «Սուրբ Մեսրոպ» խորագրով, լույս տեսած Սրբոց Հակոբյանց տպարանից: Պոեմի ձևով, բանաստեղծական գեղեցիկ պատկերներով, տրվում է Մեծ վարդապետի կյանքը:

Հաճույքով արտատպում ենք հատվածներ «Սուրբ Մեսրոպ» պոեմից:

Ան կը դառնար Արարատին,
Էջմիածնի լույսի պատին,
Հողին, ջուրին,
Տաճարներուն, պալատներուն
Մեր հայրենի,
Կըրակելու օտարության
Ցուրտեն սառած իր խեղճ հոգին:
. . . . . .
Կուգար Մեսրոպ,
Ինչպես Մովսես Սինա լեռնեն,
Անութին տակ,
Հայ գիրերու տախտակն անհուն,
Իսկ սըրտին խոր՝ ուրախության
Այգին առատ,
Ուր կը մըտնեն անոթիներն
Այս աշխարհին,
Ու լիացած կը հեռանան:

Եվ թագավորն ու հայրապետ,
Նախարարներն ու ասպետներ,
Կըղերականք ու ժողովուրդ,
Երկրի բոլոր սահմաններեն
Երամ, երամ,
Որն եղեգով, որը սուրով,
Բոլորն սակայն,
Ուրախության արցունքներով,
Եկած էին ընդունելու,
Գըրին գըտիչ, կաղապարիչ,
Նոր մարգարեն:

Ու կը ծըփար, ալիք-ալիք,
Ամբոխն այդ հոծ,
Հասկերու պես ցորեններու
Ջոր կը շարժե հովն հյուսիսին:

Ժողովուրդն էր Հայաստանյայց,
Որ գիտե միշտ,
Սպառսպուռ կործանումեն
Ամբառնալու,
Երկաթամուր իր հավատքով:
Կուգար Մեսրոպ,
Եվ ամեն աչք ու ամեն սիրտ,
Ուրախության ուներ արցունք,
Ուներ ժըպիտ,
Կաթողիկե Եկեղեցին,
Ալիքներով լիքն էր մարդոց:

Ամբոխն երկուք ճեղքըվեցավ,
Ավագ դուռնեն եկեղեցվո,
Մեսրոպ Մաշտոց մուտքն իր կըներ,
Շըրջապատված
Քերթողներով աստվածամերձ,
Որոնց սըրտին, աչքերուն խոր,
Կը բեկբեկեր,
Ինչպես վառված կարմիր ճըրագ,
Երավ մը նոր,
Որ ցայգասփյուռ կոսկիանար,
Մութերուն դեմ մեր դարերուն:

Եկեղեցին աչք էր ամբողջ,
Մեծ Հայրապետն տեսիլք մ'ինչպես
Կանգնած էր լուռ սեղանին դեմ,
Աչքին՝ արցունք, շուրթին՝ ժըպիտ:

— Ձեռքեր դալար,
Գիրին գըտիչ, կաղապարիչ,
Մեծ Մաշտոցին աստվածախոս,
Բարվույն սերմին բացված ակոս,
Եվ անկորուստ ճամբա սըրտի
Մեր ամենուն:

— Փառք և պատիվ
Թագավորին Վըռամշապուհ,
Հայրապետին աստվածարյալ,
Իշխաններուն քաջակորով,
Ու կըղերին հավատեռանդ,
Որոնք գիտցան մեկ բերելու,
Անգին ծաղիկն իմաստության,
Եվ անցնելու կյանքեն անդին,
Հավերժական ըստեղծումին:

Թող արձակվին բիրտ կապերեն,
Մուրհակներեն մեր գերության,
Սիրտերն ամեն,
Հոսի հանճարն հայուն ազատ,
Արյան, հողի և սիրտերու
Ղողանջներով հըրաշաձայն:

Թող լըվացվին սիրտերը մեր
Թույնեն օտար,
Հոսի նորեն խելքն ու հընարք
Մեր պապերուն,
Վըրան ծարավ մեր հողերուն,
Մագաղաթին խնկագունակ,
Սըլաքներեն ահեղ լույսին:

Այսպես կերգեր ժողովուրդն հայ,
Հուսապատար ու թըրթըռուն,
Օրորն ինչպես մեր դաշտերուն,
Պըտուտքը խոլ մեր ջուրերուն,
Ծափն ու ծիծաղ մեր սիրտերուն:
. . . . . .
Եկուր նորեն, Մեծ Ուսուցիչ,
Սըրբե փոշին հայելիին
Հայ հանճարին,
Որ կաւկըներդ օտարության
Ճամբաներուն,
Նենգ մըշուշին, պիղծ հաշիվին
Ալ անձնատուր,
Տեսնեն պատկերն իրենց ամբողջ,
Փայլով նախնի և աղտով նոր:

Մեր աչքերուն բաց վերըստին
Հայ գիրերու տախտակն անհուն,
Մենք աշակերտ,
Դուն ուսուցիչ հանճարաշատ,

Թափէ լույսին, վեհ իմաստն
Սերմերն ոսկի,
Մեր հոգիի անդաստանին:

Եկուր նորեն,
Որպես կապույտ անդորրություն,
Ծիածանե մեր սիրտերուն
Ոսկի երակն մեր հայրերուն,
Կարոտներու և իղձերու
Ծրփանքներով քաղցրասարսուռ:

Եվ գահընկեց մեր օրերու
Ըսպասին մեջ իմաստության,
Մեկ հետ եղիր,
Խոսքի աղբյուր, ջինջ ավազան,
Մատյանի մը նշման բացված
Մեր աչքերուն:

Ամենօրյա մեր հացն արդար,
Սրբագործված մաքուր նշխար,
Եկուր նորեն,
Մեկ լրվալու մեր ախտերեն,
Թրմբիրներեն տարագրության,
Մեր մեղքերուն վերև բացված
Դուն թև ճերմակ:

Եկուր նորեն,
Անհուն ծաղիկ արցունքներու
Եվ արյունի,
Կրտավ ակնիվ ու սրբազան,
Արվեստներու գերագույնին,
Համակ բյուրեղ, անշամանդաղ,
Հավերժության մեծ մատյանին
Մատուցվելու:

Եկուր նորեն,
Անհուն ճարմանդ աստվածային
Պատմուճանին,
Սիրո օվկիան, հույսի անդունդ,
Թեվան ամբավ մեր ապրումին,
Որուն վրա կայլակ, կայլակ,
Լույսը նստեր,
Պարգևելու պրղտոր, գունատ,
Մեր բառերուն,
Հրաշքը սուրբ ստեղծումին:

* *
*

Թույլ տուր ինձի,
Մեծ ակումիտ, անհուն մոնավ,
Քեզ բերելու երախտիքի
Խաչբուռն այս ջինջ,
Ոսկի արտեն ցորեններու,
Զոր օր մը դուն, ափով արդար,
Ցանեցիր մեր հոգիներուն:

Այսօր նորեն,
Ես՝ մին հետին մրտածումիդ
Ջավակներեն,
Հիշատակիդ առջև կեցած՝
Կը պաղատիմ անհունորեն,
Որ հոգիովդ մեկ հետ ըլլաս,
Պարտքի, վոհի և գիտության
Սուրբ ճամբայեն մեկի ռահորդ,
Մահեն ալ վեր, մահեն ալ վերջ: